



საქართველოს ფინანსური, ლეგიტიმაციისა და მონეტარული პოლიტიკის განყოფილება

# ქართული ევრო სწავლასთან დაკავშირებით

მეცხრედიანი კონფერენცია  
IX-XI კლასებისთვის

კონფერენციის თემატიკის მიხედვით

-----  
-----



აპრილი 2016

ՄԱՅԱ ԳՈՆԱՇՎԻԼԻ, ԼԻԱ ԹՈՂՈՒԱ

ՔԱՂԱՔԱՑԻ

ԵՎ

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Օժանդակ դասագիրք

IX-XI դասարաններ

Աշակերտի  
վարժուրջունների տետր

Թբիլիսի 2016

## ՄԻՐԵԼԻՒՆՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ,

«Քաղաքացի և տնտեսագիտություն» դասագիրքը նախատեսված է IX-XI դասարանի աշակերտների համար: Այն օգտագործվելու է որպես օժանդակ ձեռնարկ («Քաղաքացիական կրթության» դասընթացի համար): Գիրքը բաղկացած է երկու մասից՝ տեսական դասագիրք և վարժությունների տետր (հրատարակված են առանձին):

Այս գրքում նորովի է քննարկված քաղաքացիական կրթության տնտեսագիտական բաժինը: Գիրքը ձեռք կօգնի ավելի լավ հասկանալ այն տնտեսագիտական հարցերը, որոնց առօրյա կյանքում հանդիպում եք, գիտակցել ձեր տեղը երկրի տնտեսության մեջ և ստանալ ավելի շահավետ տնտեսագիտական որոշումներ կայացնելու հնարավորություն:

Հրատարակությունը ստեղծվել է Եվրամիության կողմից ֆինանսավորված «Եվրամիության հետ սառցաքանի պայմանագրի ազդեցությունը վրաց սպառողի վրա և նրանց գիտակցության բարձրացումը» (Raising Awareness of Local Actors on the Implications of the Association Agreement for Georgian Consumers) նախագծի շրջանակներում: Նախագիծն իրականացնում է «Վրաստանի ռազմավարական ուսումնասիրությունների և զարգացման կենտրոնը»:

Հրատարակությունը չի ներկայացնում Եվրամիության տեսակետը:

© Հեղինակային իրավունքները պաշտպանված են և պատկանում են «Վրաստանի ռազմավարական ուսումնասիրությունների և զարգացման կենտրոնին»:

© Մայա Գոնաշվիլի, Լիա Թոդուա, Թբիլիսի 2016

ISBN 978-9941-25-057-6

«Մերիդիանի» հրատարակություն, Թբիլիսի, Ալ. Ղազբեգիի պողոտա № 47

☎ 2 30-96-14; 2 14-77-11. E-mail: meridiani777@gmail.com

# ԳԼՈՒԽ 1. ՄԱՐԴՈՒՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 1. Ընտրի՛ր ճիշտ պատասխանը:

Ռեսուրսների սահմանափակության հիմնախնդիրը կլուծվի,

ա) եթե մարդիկ ռեսուրսները տնտեսելով օգտագործեն,

բ) եթե բոլորն օգտագործեն այն, ինչ ցանկանում են,

գ) եթե գիտության զարգացմանը զուգընթաց աճի արտադրանքը,

դ) չի կարող լուծվել մարդկանց անսահմանափակ պահանջմունքների պատճառով:

## ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 2. Ճիշտ է, թե՞ ոչ:

1. Ընտրության առջև միայն տարիքավոր մարդիկ են կանգնած:	Ճիշտ է	Միայն է
2. Մեր հնարավորությունները սահմանափակ են:	Ճիշտ է	Միայն է
3. Հարուստները կարող են բավարարել բոլոր պահանջները:	Ճիշտ է	Միայն է
4. Շահավետ ապրանքը միշտ օգակար է:	Ճիշտ է	Միայն է
5. Բոլոր մարդիկ շահագրգռված են հնարավորինս շատ ապրանք ձեռք բերել:	Ճիշտ է	Միայն է

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 3. Հիշի՛ր և նկարագրի՛ր 2 իրավիճակ, երբ ստիպված էիր ընտրություն կատարել: Նշի՛ր ի՞նչն էր ընտրության պատճառը, ո՞ր ռեսուրսն էր սահմանափակ:**

Իրավիճակի նկարագրություն	Սահմանափակ ռեսուրսներ
1.	
2.	

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 4. Հետևյալ աղյուսակում գրառի՛ր քո պահանջները և դրանց բավարարման ուղիները:**

<p>Հիմնական պահանջումները (առանց որոնց բավարարման չես կարող ապրել)</p>	<p>Պահանջումների բավարարման ուղիները</p>
<p>Լրացուցիչ պահանջումները (առանց որոնց բավարարման հնարավոր է ապրել, բայց դժվար է)</p>	<p>Պահանջումները բավարարման ուղիները</p>
<p>Այլ պահանջումներ (առանց որոնց բավարարման հնարավոր է հեշտ ապրել)</p>	<p>Պահանջումները բավարարման ուղիները</p>

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 5. Աղյուսակում գրառի՛ր առարկաներ կամ ծառայություն, որոնք քեզ կամ քո ընկերների համար առանձնապես օգտակար ես համարում: Բացատրի՛ր այդ տարբերությունների պատճառը:**

Ինձ համար ավելի օգտակար է, քան ընկերոջս համար:	Ընկերոջս համար ավելի օգտակար է, քան ինձ համար:
1	1
2	2
3	3

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 6. Ընտրի՛ր որևէ գովազդ և դրա դրական և բացասական կողմերը գրառի՛ր ստորև տված գծապատկերում:**

Գովազդի դրական կողմերը	Գովազդի բացասական կողմերը

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 7. Ընտրի՛ր քեզ դուր եկած գովազդը և պատասխանի՛ր հետևյալ հարցերին.**

- Ինչո՞ւ է դուրդ գալիս այս գովազդը: Ի՞նչ դրական ասոցիացաներ (զուգորդություններ) է այն առաջացնում քեզ մոտ:
  
- Ի՞նչ տեղեկատվություն է հաղորդում քեզ գովազդը:
  
- Ինչպե՞ս ես կարծում՝ ինչքանո՞վ է վստահելի այն տեղեկատվությունը, որը գովազդից ես ստանում: Ինչո՞ւ և՛ եք կասկածում:

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 8. Ընտրի՛ր որևէ գովազդ: Համացանցում կամ ծանոթ-ընկերներից ձեռք բե՛ր տեղեկատվություն գովազդած ապրանքի վերաբերյալ: Վերլուծի՛ր ստացած տեղեկատվությունը և պատասխանի՛ր հետևյալ հարցերին.**

- Ապրանքի ո՞ր հատկանիշներից են գոհ սպառողները:
- Ապրանքի ո՞ր հատկանիշներից են դժգոհ սպառողները:
- Ապրանքի ո՞ր հատկանիշների վրա է գովազդը սևեռում ուշադրությունը:
- Որքանո՞վ է համապատասխանում գովազդով ստեծված սպասելիքը սպառողի իրական փորձին:



## ԳԼՈՒԽ 2. ԱՌԵՏՈՒՐ և ՇՈՒԿԱ

### ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 1. Ընտրի՛ր ճիշտ պատասխանը:

1. Մարդիկ առևտուր են անում, որովհետև
  - ա) ուզում են ավելորդ ապրանքից ազատվել,
  - բ) ուզում են իրենց համար քիչ պետքական ապրանքը փոխանակել շատ պետքական ապրանքի հետ,
  - գ) փողի կարիք ունեն:
  
2. Պահանջմունքը
  - ա) վճարողունակության պահանջարկ է,
  - բ) այն ամենը, ինչի ձեռքբերման ցանկություն ունենք,
  - գ) այն ամենը, ինչ ցանկանում ենք ունենալ,
  - դ) 3 պատասխանն էլ սխալ է:
  
3. Երբ շուկայում ամրապնդվում է հավասարակշռություն,
  - ա) պահանջարկի և առաջարկի չափերը հավասար են,
  - բ) պահանջարկի չափն առաջարկից ավել է,
  - գ) առաջարկի չափը պահանջարկից ավել է,
  - դ) ոչ մի պատասխան ճիշտ չէ:

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 2. Ընտրի՛ր որևէ ապրանք: Բնութագրի՛ր ապրանքի շուկան քո քաղաքում, գյուղում կամ շրջանում: Ստորև բերված աղյուսակում գրառի՛ր այդ ապրանքի վաճառողներին և գնորդներին:**

Ապրանք՝ \_\_\_\_\_ քաղաք/շրջան/գյուղ \_\_\_\_\_

Վաճառողներ	Գնորդներ

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 3. Կիրառի՛ր հետևյալ աղյուսակը և կազմի՛ր նարնջի շուկայի գծապատկերը:**


1 կգ նարնջի արժեքը (լարի)	Գնորդների քանակը, ովքեր ցանկանում են և այդ գնով 1 կգ նարինջ գնելու հնարավորություն ունեն (պահանջարկի քանակը)	Վաճառողների քանակը, ովքեր ցանկանում են և այդ գնով 1 կգ նարինջ վաճառելու հնարավորություն ունեն (առաջարկի քանակը)
0,1	26	0
0,2	22	2
0,3	18	4
0,4	15	6
0,5	12	8
0,6	10	11
0,7	8	14
0,8	6	18
0,9	4	22
1	2	26

Գծապատկերը կառուցելու համար այսպես վարվի՛ր. ստորև՝ կորդինատաների տարածքում, նարնջի յուրաքանչյուր գնի համար գտի՛ր մի կետ, որը ներկայացնում է համապատասխան պահանջարկի քանակը (դրա համար համապատասխան գնի գրառումից հաշվիր դեպի աջ այնքան վանդակ, որքան, ըստ աղյուսակի, այդ գնով նարինջի պահանջարկն է): Նշի՛ր ստացած կետը X (որոշ կետեր արդեն գծապատկերի վրա հանած է): Միացրու՝ X կետերը չընդհատվող կոր գծով և կստանաս շուկայում նարնջի պահանջարկի գծապատկերը:

Հետո կրկնի՛ր նույնը նարնջի առաջարկի համար՝ նարնջի յուրաքանչյուր գնի համար գտի՛ր մի կետ, որը ներկայացնում է համապատասխան առաջարկի քանակը (այսինքն՝ գնից դեպի աջ հաշվիր այնքան վանդակ, ինչքան վերևի աղյուսակում է այդ գնով նարնջի առաջարկի գինը ): Նշի՛ր ստացած կետը 0 (որոշ կետեր արդեն գծապատկերի վրա հանած են): Միացրու՝ 0 կետերը չընդհատվող կոր գծով և կստանաս շուկայում նարնջի առաջարկի գծապատկերը:

Տարբերվող գույնով գծի՛ր պահանջարկի և առաջարկի կորերի հատման կետը: Դա շուկայի հավասարակշռության կետն է:

- Ինչքա՞ն/ինչպիսի՞ն է նարնջի գինն այդ կետում:
- Ինչքա՞ն/ինչպիսի՞ն է գնորդների քանակը:
- Ինչքա՞ն/ինչպիսի՞ն է վաճառողների քանակը:



Գրանցի՛ր տեքստի կարևորությունները.

- Շուկայի հավասարակշռության կետում նարնջի գինը կազմում է ----- լարի:
- Շուկայի հավասարակշռության կետում նարնջի գնորդների քանակը (պահանջարկի քանակը) կազմում է ----- մարդ:
- Շուկայի հավասարակշռության կետում նարինջ վաճառողների քանակը (առաջարկի քանակը) կազմում է ----- մարդ:

**ՎԱՐՇՈՒԹՅՈՒՆ 4. Ընտրի՛ր ճիշտ պատասխանները: Օգտագործի՛ր աղյուսակը, քո կազմած գծապատկերը և դասագրքի 72-74 էջերում տրված գծապատկերները:**

1. Երբ նարնջի գինը 40 թեթրի է, շուկայում ունենք
  - ա) ապրանքի ավելցուկ,
  - բ) ապրանքի պակասուրդ,
  - գ) շուկայական հավասարակշռություն:
2. Երբ նարնջի գինը 60 թեթրի է, շուկայում ունենք
  - ա) ապրանքի ավելցուկ,
  - բ) ապրանքի պակասուրդ,
  - գ) շուկայական հավասարակշռություն:
3. Երբ նարնջի գինը 90 թեթրի է, շուկայում ունենք
  - ա) ապրանքի ավելցուկ,
  - բ) ապրանքի պակասուրդ,
  - գ) շուկայական հավասարակշռություն :

4. Երբ նարնջի գինը 30 թեթրի էր և հասավ մինչև 50 թեթրի: Ի՞նչ եղավ նարնջի պահանջարկը:  
ա) կրճատվեց  
բ) ավելացավ  
գ) մնաց անփոփոխ
5. Երբ նարնջի գինը 30 թեթրի էր և հասավ մինչև 50 թեթրի: Ի՞նչ եղավ նարնջի առաջարկը:  
ա) կրճատվեց  
բ) ավելացավ  
գ) մնաց անփոփոխ

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 5.** Հիշի՛ր մի դեպք, երբ դու կամ քո մտերիմը չմտածված գնել էք որևէ ապրանք: Նկարագրի՛ր այդ դեպքը և որոշի՛ր. արդյոք ռացիոնալ էր այդ ընտրությունը: Կգնեի՞ր արդյոք նույն ապրանքը, եթե նախօրոք մտածած լինեիր և բոլոր հնարավորությունները կշռադատած: Փորձի՛ր բացատրել ի՞նչն ազդեց քո (կամ քո մտերիմի) ընտրության վրա:

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 6. Գրի՛ր «Միշտ արդա՞ր է առևտուրը» թեմայով էսսե:**  
(Կարող եք քննարկել «Արդար առևտրի» շարժի օրինակը)

### ԳԼՈՒԽ 3. ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 1. Քննարկի՝ ղ դասագրքի 71-րդ էջում տված 5-րդ գծապատկերը և ձևակերպի՝ ղ. շուկայի ո՞ր տեսակներն են պատկանում լիարժեք և ոչ լիարժեք մրցակցությանը:**

Լիարժեք մրցակցություն	Ոչ լիարժեք մրցակցություն

### ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 2. Ի՞նչ տեսակի շուկա է:

Քննարկի՝ ղ ստորև նշված ապրանքի շուկան քո քաղաքի/շրջանի օրինակով: Քննարկի՝ ղ քանի՞ մատակարար կա շուկայում: Կարո՞ղ է արդյոք նրանցից որևէ մեկն իր ցանկությամբ փոխել ապրանքի շուկայական գինը: Եզրակացություն արա շուկայի տեսակի վերաբերյալ: Օգտագործի ղ դասագրքի 68-րդ էջի գծապատկեր 1-ը:

Ապրանք	Արտադրող/մատակարարողների քանակը	Մեկ մատակարարի (կամ փոքր խմբի) ազդեցության ունակությունը շուկայական գնի վրա	Շուկայի տեսակը (լիակատար մրցակցություն, մոնոպոլիա, օլիգոպոլիա կամ մոնոպոլիստական մրցակցություն)
Խնձոր			

Բենզին			
Բջջային հեռախոս			
Լիմոնադ			
Էլեկտրաէներգիայի մատակարարում			

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 3. Աղյուսակում գրի՛ր՝ ո՞ւմ համար էօգտակար/Վսասակար մրցակցությունը և ո՞ւմ համար՝ նրա սահմանափակումը (քննարկի՛ր տարբեր տեսակի արտադրողների/սպառողների): Ցուրաքանչյուրի համար բացատրի՛ր պատճառը:**

Մրցակցությունը շահավետ (օգտակար) է	Մրցակցության սահմանափակումը շահավետ (օգտակար) է
Մրցակցությունը վսասակար է	Մրցակցության սահմանափակումը վսասակար է

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 4. Գրառի՛ր այն պատճառները, որոնց պատճառով արտադրողները խուսափում են մրցակցությունից:**


**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 5. Ընտրի՛ր ճիշտ պատասխանը:**

1. Ձեռներեցը փորձում է արտադրությունը մեծացնել, քանի որ
  - ա) միավոր արտադրանքի արտադրությունը խոշոր ձեռնարկությունում էժան է նստում,
  - բ) միավոր արտադրանքի արտադրությունը խոշոր ձեռնարկությունում թանկ է նստում,
  - գ) խոշոր ձեռնարկությունն ավելի հեղինակավոր է,
  - դ) խոշոր ձեռնարկությունում արտադրանքի որակն ավելի լավ է,
  - ե) սպառողները նախընտրում են խոշոր ձեռնարկության արտադրանք:
  
2. Շուկայում դոմինացված վիճակ ունի այն ընկերությունը,
  - ա) որն ամենամեծն է,
  - բ) որն ամենափոքրն է,
  - գ) որը կարող է ազդել շուկայական գնի վրա,
  - դ) որն ամենաորակյալ արտադրանքն է տալիս:
  
3. Կարտել նշանակում է
  - ա) միասնական արտադրանք,
  - բ) ձեռներեցների համաձայնությունն արտադրանքի/ապրանքի վաճառքի գների շուրջ,
  - գ) նմանատիպ արտադրանք արտադրողներ:
  
4. Հակամոնոպոլիստական օրենքն արգելում է
  - ա) մոնոպոլիաները,
  - բ) մոնոպոլիաները և կարտելները,
  - գ) կարտելները և դոմինանտ իրավիճակների չարաշահումները,
  - դ) մոնոպոլիաները և դոմինանտ իրավիճակների չարաշահումները,
  - ե) շուկայում դոմինանտ վիճակի առկայությունը:
  
5. Ձեռներեցներին պետական օգնությունը
  - ա) թույլատրելի է,
  - բ) թույլատրելի է, բացի առանձին բացառությունների,
  - գ) արգելված է,
  - դ) արգելված է, բացի առանձին բացառությունների:





## ԳԼՈՒԽ 4. ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՆԿՈՒՄՆԵՐ

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 1.** Միեմայում լրացրո՛ւ բոլոր այն մտքերը, որոնք կապ ունեն «Շուկայի պարտություն» արտահայտության հետ:



**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 2.** Ընտրի՛ր ճիշտ պատասխանը (կամ պատասխանները):

- «Շուկայի անկումը» այն վիճակն է, երբ
  - շուկայում բավարար քանակի ապրանք չկա,
  - շուկայում շատ են վաճառողները,
  - շուկան որևէ հիմնախնդրի չի կարող լուծել:
- Արտաքին էֆեկտի օրինակներ են.
  - միջավայրի կեղտոտումը ցեմենտի գործարանի խողովակից,
  - բանվորների ծանր աշխատանքային պայմանները,
  - գետի կեղտոտումը կոյուղու ջրերով,
  - արտադրանքի ցածր որակ,
  - հումքի ոչ արդյունավետ կիրառում,
  - մնացորդների աղբակույտեր գործարանի շուրջը:
- Եթե արտադրանքի խոտանի պատճառով սպառողն է տուժել, նրան պետք է փոխհատուցի
  - վաճառողը,
  - խանութը,
  - արտադրողը կամ ներմուծողը,
  - ոչ մի պատասխան ճիշտ չէ:
- Արտադրանքի փաթեթավորման վրա նշված  նշումը նշանակում է՝
  - արտադրանքը չի զսասում միջավայրը,
  - արտադրանքը բավարարում է Եվրամիության սահմանած անվտանգության նորմերը,
  - արտադրանքը նախատեսած է որևէ մի պետության համար,
  - արտադրողը պատասխանատվություն չի կրում այդ արտադրանքի համար:
- Ապրանքի փաթեթավորման վրա նշված  նշումը նշանակում է, որ
  - ապրանքը պարունակում է շարժվող մասեր,
  - փաթեթավորած մասսան միջավայրում հեշտությամբ նեխում/յուրացվում է,
  - հնարավոր է փաթեթավորման ենթակա մասսայի մշակում և նորից օգտագործում (ռեցիկլիբացում),
  - արգելվում է ապրանքը գցել աղբը:

6. «Տեղեկատվության ասիմետրիա» նշանակում է՝
- ա) սպառողը տարբեր ապրանքների մասին տարբեր տեղեկատվություն ունի,
  - բ) սպառողների տեղեկացվածության մակարդակը տարբեր է,
  - գ) վաճառողը միշտ տեղեկացված է,
  - դ) գնորդն ու վաճառողը վաճառքի ենթակա ապրանքի մասին տարբեր տեղեկատվություն ունեն:

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 3. Գրի՛ր՝ ո՞ր հիմնախնդիրներն է կարգավորում շուկան ինքնուրույն, առանց միջամտության և որը՝ ոչ: Քննարկի՛ր հետևյալ հիմնախնդիրները.**

1. արտադրանքի պակասուրդ,
2. աղքատություն,
3. շրջակա միջավայրի աղտոտում,
4. ապրանքի/արտադրանքի ցածր որակ,
5. գործազրկություն,
6. գույքային անհավասարություն,
7. ռեսուրսների ոչ արդյունավետ սպառում,
8. սպառողի ապակողմնորոշում,
9. միանմանապրանքի ավելցուկ,
10. ապրանքի ոչ համապատասխան գին,
11. ոչ բոլորի համար հասանելի կրթություն,
12. սպառողի համար վտանգավոր/վսասակար ապրանք շուկայում,
13. երեխաների աշխատանք,
14. հնացած, ոչ ժամանակակից ապրանք,
15. անհասանելի առողջապահություն ոչ բոլորի համար:

Հիմնախնդիրներ, որոնք շուկան ինքնուրույն է հաղթահարում	Հիմնախնդիրներ, որոնք շուկան ինքնուրույն չի կարող հաղթահարել (շուկայի անկում/ ձախողում)

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 4.** Գոյություն ունի կարծիք, որ ավտոմոբիլային վառելանյութի համար լրացուցիչ հարկի սահմանումը կրճատում է օդի կեղտոտածությունը: Համամի տեսայն կարծիքին: Հիմնավորի՞ր քո դիրքորոշումը:

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 5.** Գրի՞ր մի քանի ապրանք, որոնք շրջակա միջավայրն ավելի քիչ են վնասում, քան մյուսները: Բացատրի՞ր ինչո՞ւ ընտրեցիր այդ ապրանքը: Ինչո՞ւ ես այդպես կարծում, որ այդ ապրանքը շրջակա միջավայրը չի վնասում:

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 6.** Պատկերցրո՞ւ, որ գնում ես օգտագործած համակարգիչ, բջջային հեռախոս կամ ավտոմեքենա: Արտաքին տեսքից ապրանքն ոչ մի վնասվածք չունի և ամբողջությամբ նոր տեսք ունի: Վաճառողն էլ քեզ հավաստիացնում է, որ «ապրանքը» գրեթե չօգտագործված է: Կվճարեի՞ր այդ ապրանքի համար նույն գինն, ինչ նոր, չօգտագործած ապրանքի համար: Ինչո՞ւ: Հիմնավորի՞ր քո դիրքորոշումը:

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 7. Ձեռներեցը պարտավոր է վաճառքի ենթակա ապրանքի մասին սպառողին վրացերենով մատուցել որոշակի տեղեկատվություն: Թվարկածներից որի մատակարարումը պարտադիր չէ:**

- ա) ապրանքի անվանումը/տեսակը,
- բ) ապրանքի բրենդային անվանումը,
- գ) արտադրող ֆիրմայի անվանումը,
- դ) ապրանքի կշիռը (ոչ մթերքի համար),
- ե) ապրանքի պատրաստման տեխնոլոգիան,
- զ) ապրանքի պատրաստման ամսաթիվը (մթերքի համար),
- է) վաճառողի անունը և ազգանունը,
- ը) ապրանքի օգտագործման հրահանգը,
- թ) արտադրողի կոնտակտային հասցեն,
- ժ) երկիրը, որտեղ արտադրվել է ապրանքը:

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 8. Ստորև թվարկած է մի քանի գաասակար ապրանք: Նշի՞ր, քո կարծիքով, դրանցից որի՞ վաճառքն է պետք արգելել (կամ սահմանափակել) և ինչո՞ւ:**

Վտանգ պարունակող ապրանք	Պե՞տք է արգելել: Հիմնավորի՞ր պատասխանը:
Սուր դանակ	
Ապակյա բաժակ	
Ծխախոտ	
Մկնդեղ	

## ԳԼՈՒԽ 5. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 1. Ընտրի՛ր ճիշտ պատասխանը:

Մեփական ապրանքը

- ա) անձնական օգտագործման (ռեսուրս) է և մրցողունակ,
- բ) անձնական օգտագործման (ռեսուրս) է, բայց մրցողունակ չէ,
- գ) մրցողունակ է, բայց անձնական օգտագործման (ռեսուրս) չէ,
- դ) ո՛չ մրցողունակ է, ո՛չ էլ անձնական օգտագործման (ռեսուրս):

### ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 2. Ստորև թվարկածների յուրաքանչյուրի դիմաց նշի՛ր՝ ո՞րն է մրցողունակ կամ/և անձնական օգտագործման (ռեսուրս):

Բարիք	Մրցողունակություն (սպառողները մրցվում են միմյանց հետ)	Անձնական օգտագործման ռեսուրս (հնարավոր է սպառման կանխում)
1. ազգային ինքնապաշտպանություն		
2. համբուրգեր		
3. բարձրագույն կրթություն		
4. պաղպաղակ		
5. բացօթյա ներկայացում		
6. ինֆեկցիոն հիվանդության կանխում		
7. անձնական համակարգիչ		
8. փողոց		
9. գյուղական արոտավայր		
10. մետրո		
11. փողոցների մաքրություն		

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 3.** Ընտրի՛ր Վրաստանում ընդհանուր սպառման ռեսուրսների 3 տեսակ (օրինակ՝ արոտավայրեր, պուրակներ, անտառ, գետ, ծովափ, ճանապարհներ և այլն): Գրառի՛ր ի՞նչ հիմնախնդիրներ են կապված դրանցից յուրաքանչյուրի սպառման հետ: Քո կարծիքով՝ ինչպե՞ս կարելի է դրանք լուծել:

Ընդհանուր սպառման ռեսուրսներ	Կապված հիմնախնդիրներ
1.	1.
2.	2.
3.	3.

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 4.** Ի՞նչ ես կարծում. անվճար պիտի՞ լինի բարձրագույն կրթությունը: Ձևակերպի՛ր քո կարծիքը և հիմնավորի՛ր:

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 5. Միմյանց համապատասխան տերմինները միացրո՛ւ սլաքներով:**

երգ

բրենդային անվանում

հեղինակային իրավունք

վեպ

ավանդական սննդամթերք

պատենտ

ֆոտո

զյուտ

ապրանքանիշ

կոշիկի դիզայն

հուշարձան

աշխարհագրական նշում

զարդի դիզայն

նկար

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 6. Անցանկալի գովազդի «դուրսգրման» չեղարկում:**

Քո կամ քո մերձավորի ստացած գովազդային հաղորդագրություններում ընտրի՛ր որևէ մեկը, որը չես ցանկանում այլևս ստանալ: Փնտրի՛ր հաղորդագրության վերջում ցուցմունք այն մասին, թե ինչպես է հնարավոր այն «դուրս գրել»: սա կարող է լինել Unsubscribe, SMS OFF գրությունը կամ այլ նմանատիպ, հեռախոսոսով նշած, որին պետք է զանգել կամ հաղորդագրություն ուղարկել: Կատարի՛ր ցուցումը sms-ը վերացնելու համար:

Եթե անցանկալի հաղորդագրության նշված հեռախոսը չի աշխատում կամ վերացման հնարավորություն հաղորդագրության մեջ ընդհանրապես չկա, դրա մասին տեղեկացրո՛ւ անձնական տեղեկատվության պաշտպանության տեսուչին: Դրա համար օգտվի՛ր հետևյալ հասցեից՝ <http://personaldata.ge/ge/contact> և լրացրու հաղորդագրման ձևը. նշի՛ր քո անունը և ազգանունը, էլփոստի հասցեն և նկարագրի՛ր, թե ինչ համարից ես ստացել հաղորդագրությունները, ինչ ես արել դրանք չեղարկելու համար և ինչպիսին է արդյունքը: Էլեկտրոնային հասցեով վերոնշյալ տեսուչից անպայման կստանաս պատասխան: Հնարավոր է, որ նա լրացուցիչ տեղեկատվություն խնդրի քեզանից: Կատարի՛ր նրա խնդրանքը:

Նկարագրե՛ք այս վարժությունից ձեռք բերած փորձը:

## ԳԼՈՒԽ 6. ԳՈՒՅՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 1. Քննարկի՛ր ստորև թվարկած պայմանագրային հարաբերությունները և նշի՛ր պայմանագրի կողմերը:**

Հարաբերություն	Պայմանագրի կողմերը	
Աննան խանութից գնեց գիրք:		
Իլյան ավտոբուսով դպրոց գնաց:		
Գոգին և Թամարը փոխանակեցին հեռախոսները:		
Նինոն Վախթանգից վերցրեց գիրք:		
Էլիստն բնակարան է վաճել:		
Միխան Նիկային գնդակ է նվիրել:		
Մանանան ապառիկով համակարգիչ է գնել:		
Թամարը բնակարանում բնական գազ ունի:		
Աղբահավաք մեքենան աղբարկղն է փոխում:		
Էթերին սովորում է մասնավոր դպրոցում:		
Զվիադը բանկից վարկ է վերցրել:		



**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 2. Ընտրի՛ր ճիշտ պատասխանը:**

1. Գործարքը

- ա) կամքի դրսևորում է իրավաբանական հարաբերություններ ստեղծելու մասին,
- բ) փոխհատուցում,
- գ) այլընտրանքից մեկի ընտրությունն է:

2. Եթե ինչ-որ մեկը Ձեզ հետ պայմանագիր է կնքել, բայց չի իրագործում այն,

- ա) դուք էլ կարող եք նմանապես չիրագործել պայմանագիրը,
- բ) դուք պետք է տեղեկացնեք երկրորդ կողմին, որ, Ձեր կարծիքով, նա չի իրագործում պայմանագիրը և ուղղելու համար տաք խելամիտ ժամկետ, այդ ժամկետի սպառումից հետո կարող եք պահանջել պայմանագիրն անվավեր ճանաչել,
- գ) միևնույն է, Դուք պետք է իրագործեք պայմանագիրը:

3. Եթե գործարքը կեղծիքով է կնքվել Ձեզ հետ (օրինակ՝ այն կնքելուց Ձեզ սխալ կամ թերի տեղեկատվություն են տվել գործարքի առարկայի մասին),

- ա) կարող ես չիրագործել գործարքը և այդ մասին ոչ էլ տեղեկացնել երկրորդ կողմին,
- բ) գործարքը չեղարկելն անհնար է,
- գ) երկրորդ կողմին պետք է տեղեկացնես, որ, քո կարծիքով, գործարքը կեղծիքով է կնքվել, և դու ցանկանում ես այն չեղարկել:

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 3. Ճի՞շտ է, թե՞ ոչ:**

1. Երբ կամենաս, պայմանագրից դուրս կգաս:	Ճիշտ է	սխալ է
2. Պայմանագիրը գործարք է երկու կամ ավել անձանց միջև:	Ճիշտ է	սխալ է
3. Բոլոր պայմանագրերը գործարք են, սակայն ոչ բոլոր գործարքներն են պայմանագիր:	Ճիշտ է	սխալ է
4. Ուժի մեջ են միայն գրավոր պայմանագրերը:	Ճիշտ է	սխալ է
5. Հարկադրաբար կնքված գործարքի անվավերությունը չես կարող պահանջել:	Ճիշտ է	սխալ է
6. Պայմանագիրը դադարեցնելու համար բավարար է երկրորդ կողմին զգուշացնելը:	Ճիշտ է	սխալ է
7. Պայմանագիրը չեղարկելն անհնար է:	Ճիշտ է	սխալ է
8. Եթե պայմանագիրը չի իրագործում, երկրորդ կողմը կարող է պահանջել հասցրած փաստի փոխհատուցում:	Ճիշտ է	սխալ է
9. Գնած ապրանքը չի կարելի խանութ էտ վերադարձնել, միևնույնն է, այն թերություն ունի, թե՞ ոչ:	Ճիշտ է	սխալ է

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 4.** Որոշ երկրներում սպառողն իրավունք ունի գնած ապրանքը մի քանի օրից ետ վերադարձնելու: Գրի՛ր դրա դրական և բացասական կողմերը:

Դրական կողմերը	Բացասական կողմերը

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 5.** Ծանոթացի՛ր Եվրամիությունում սպառողի իրավունքների նկարագրմանը: Ըստ քեզ՝ դրանցից ո՞րը պետք է ունենա վրաց սպառողը և ո՞րը՝ ո՛չ:

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 6.** Գիվին պատրաստվում է բանկից վարկ վերցնել: Տարբեր բանկերում վարկի տրամադրման տարբեր պայմաններ են: Բանկերի պայմանների ո՞ր հիմնական ցուցանիշը պետք է համեմատի Գիվին:

- ա) անվանական տոկոսադրույք,
- բ) ծառայողական միջնորդավճար,
- գ) վարկի տրամադրման միջնորդավճար,
- դ) արդյունավետ տոկոսադրույք,
- ե) գումարը կանխիկացնելու միջնորդավճար:

## ԳԼՈՒԽ 7. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՏՈՒՐ

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 1. Թվարկի՝ր այն պատճառները, որոնց պատճառով էլ նույն ապրանքի արտադրումը մի երկրի համար ավելի թանկ է, քան մյուսի համար:**

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 2. Ընտր՝ր ճիշտ պատասխան(ներ)ը:**

1. Այլընտրանքային ծախս նշանակում է.
  - ա) էկզոտիկ, հազվադեպ հումքի արժեք,
  - բ) ծախսեր, որը կունենար ձեռներեցը, այլ տեխնոլոգիաներ օգտագործելիս,
  - գ) այն, ինչը չենք ընտրել
2. Համաշխարհային առևտրային կազմակերպության նպատակն է՝
  - ա) ժողովրդավարության զարգացումը,
  - բ) հնարավորինս շատ ապրանքի և ծառայության ձեռքբերումը,
  - գ) շուկայական տնտեսության զարգացման աջակցումը,
  - դ) երկրների միջև առևտրի աջակցումը,
  - ե) նավթամթերքի գնի սահմանումը:
3. Միջազգային առևտրին խոչընդոտում է
  - ա) ապրանքի բազմազանությունը,
  - բ) մաքսային սակագների վճարումը,
  - գ) տարբերակված տեխնիկական պահանջարկը արտադրանքի նկատմամբ,
  - դ) արտադրանքի անվտանգությունը,
  - ե) ներմուծման վրա առկա քվոտաները:
4. Պրոտեկցիոնալ քաղաքականություն նշանակում է՝
  - ա) երկրի ներքին շուկայի պաշտպանում ներմուծումից,
  - բ) երկրի ինքնապաշտպանություն,
  - գ) մի երկրի կողմից մյուսի պաշտպանում,
  - դ) ընկերության կողմից երկրի ինքնապաշտպանության ապահովում:
5. Եվրամիության հետ ազատ առևտրի պայմանագիրը նշանակում է, որ
  - ա) Վրաստանը Եվրամիության անդամ է,
  - բ) Վրաստանը Եվրամիության անդամ կդառնա,
  - գ) ցանկացած վրացական արտադրանքի անարգել թույլտվություն էվրոպական շուկա,
  - դ) Եվրամիության և Վրաստանի միջև առևտրի հեշտացումն այն պայմանով, եթե Վրաստանում արտադրած ապրանքն անվտանգ լինի:

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 3. Ճիշտ է, թե՞ ոչ:**

1. Միջազգային առևտուրը շահավետ է միայն այն երկրների համար, ովքեր նավթամթերք և գազ են վաճառում:	Ճիշտ է	սխալ է
2. Միջազգային առևտուրը շահավետ է միայն առաջատար տեխնոլոգիաներ ունեցող երկրների համար:	Ճիշտ է	սխալ է
3. Ագրարային երկրները միջազգային առևտրում միշտ պարտված են փնում:	Ճիշտ է	սխալ է
4. Միջազգային առևտուրը բոլոր երկրների համար շահավետ է:	Ճիշտ է	սխալ է
5. Միջազգային առևտուրը շահավետ է միայն հարուստ երկրների համար:	Ճիշտ է	սխալ է
6. Երկիրը կարող է վաճառել միայն այն արտադրանքը, որի արտադրության մեջ նա բացարձակ առավելություն ունի:	Ճիշտ է	սխալ է
7. Միշտ գոյություն ունի արտադրանք, որի արտադրության մեջ երկիրը համեմատական առավելություն ունի:	Ճիշտ է	սխալ է

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 4. «Մարզական էստաֆետ»:**

Գիվին և Զվիադը պատրաստվում են մարզական մրցույթի մասնակցել: Թիմերը բաղկացած են 5 հոգուց: Թիմի մեկ անդամը պետք է դպրոցի բակով վազի, իսկ մյուսը՝ դպրոցի լողավազանը լողալով անցնի: Հաղթող է ճանաչվում այն թիմը, որն երկու առաջադրանքն էլ (ընդհանուր) ամենակարճ ժամկետում կկատարի:

Զվիադը բակով վազելու և լողավազանում լողալու համար հավասար՝ 6-6 րոպե է ծախսում: Գիվին նրանից արագաշարժ է՝ նա Զվիադից երկու անգամ ավելի արագ է լողում և երեք անգամ ավելի արագ՝ վազում: Ինչպե՞ս պետք է տղաները առաջադրանքը բաժանեն, որ մրցույթում (ընդհանուր) նվազագույն ժամանակ գրանցեն:

Լրացրու աղյուսակը՝

Մրցույթի մասնակից	Վազքի տևողություն	Լողի տևողություն	Մարզաձև, որտեղ մասնակիցը համեմատական առավելություն է ցուցաբերում
Գիվի			
Զվիադ			

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 5. Գրի՛ր, ո՞ւմ է օգուտ տալիս և ո՞ւմ վնասում արտադրանքի արտահանումը և ներկրումը, ինչո՞ւ:**

(Ներկրում նշանակում է երկիր ապրանք բերել, իսկ արտահանում՝ երկրից ապրանք դուրս հանել)

Ներկրում (իմպորտ)

Վնասում է	Օգուտ է տալիս

Արտահանում (էքսպորտ)

Վնասում է	Օգուտ է տալիս

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 6. Համացանցում գտի՛ր 3-4 հոդված ԳՆՕ մթերքների մասին: Քննադատաբար վերլուծի՛ր դրանց բովանդակությունը և գրառի՛ր՝ ի՞նչն է սխալ և ի՞նչը սխալ:**

Ճիշտ տեղեկատվություն	Սխալ տեղեկատվություն

## ԳԼՈՒԽ 8. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ

### ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 1. Ընտրի՛ր ճիշտ պատասխանը:

1. Համախառն ներքին արդյունք կոչվում է՝
  - ա) մեկ տարվա ընթացքում գործարանում արտադրած ապրանքի արժեքը,
  - բ) մեկ տարվա ընթացքում երկրում արտադրած միջանկյալ ապրանքի/արտոդարանքի արժեքը,
  - գ) մեկ տարվա ընթացքում արտադրած վերջնական ապրանքի/ծառայության արժեքը,
  - դ) մեկ տարվա ընթացքում գործարանում արտադրած մթերքի (միջանկյալ և վերջնական ) արժեքը:
  
2. Արժեզրկումը
  - ա) գնաճն է,
  - բ) գների անկումն է,
  - գ) արտադրանքի քանակի աճն է,
  - դ) արտադրանքի քանակի անկումն է:
  
3. 2014 թվականին աշխարհում ամենամեծ ՀՆԱ ունեցել է
  - ա) Ռուսաստանը,
  - բ) Չինաստանը,
  - գ) Վրաստանը,
  - դ) ԱՄՆ-ն,
  - ե) Մեծ Բրիտանիան:
  
4. Մեկ բնակչի հաշվով, համաձայն ՀՆԱ-ի (2014 թվականի տվյալներ),
  - ա) Չինաստանն աշխարհում առաջինն է,
  - բ) ԱՄՆ-ն աշխարհում առաջինն է,
  - գ) Հայաստանը Վրաստանից առաջ է,
  - դ) Ճապոնիան ԱՄՆ-ից առաջ է:
  
5. Սպառողական զամբյուղ նշանակում է՝
  - ա) ապրանքի/մթերքի մինիմալ թվարկում, որն անհրաժեշտ է սպառողին,
  - բ) սպառողի կողմից օրվա ընթացքում գնած ապրանքը/ծառայությունը,
  - գ) երկրում ամենաշատ/հաճախ օգտագործվող ապրանքի և ծառայության թվարկում,
  - դ) անվավոր զամբյուղ, որն օգտագործում ենք սուպերմարկետում:
  
6. Արժեզրկումը չափվում է՝
  - ա) երկրում բոլոր ապրանքների/ծառայության գնաճի համաձայն,
  - բ) դոլարի կուրսի փոփոխության համաձայն,
  - գ) մթերային զամբյուղի գների փոփոխության համաձայն,
  - դ) սպառողական զամբյուղի գների փոփոխության համաձայն:
  
7. Միջին սպառողի գոյության մինիմումը Վրաստանում կազմում է՝
  - ա) մոտ 144 լարի,
  - բ) մոտ 252 լարի,
  - գ) 778 լարի:

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 2. Ճիշտ է, թե՞ ոչ:**

1. Այսօր աշխարհում բոլոր երկրներում շուկայական տնտեսություն է:	Ճիշտ է	սխալ է
2. Շուկայական տնտեսությունը միշտ ժողովրդավարական է:	Ճիշտ է	սխալ է
3. Վարչական տնտեսության մեջ արտադրանքի միջոցները պատկանում են պետությանը:	Ճիշտ է	սխալ է
4. Շուկայական տնտեսության մեջ պետությունն է սահմանում/ որոշում գները:	Ճիշտ է	սխալ է
5. Այսօր աշխարհում բոլոր երկրներում խառը տնտեսություն է:	Ճիշտ է	սխալ է

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 3. Վրաստանում միջին սպառողը սննդամթերքի վրա ծախսում է իր եկամուտի մեկ երրորդը (տե՛ս դասագրքի 64-րդ էջի գծապատկերը): Թերևս կենսական մինիմումի մեջ մթերային զամբյուղի արժեքը կազմում է երկու երրորդը: Սա տեղի է ունենում այն պատճառով, որ աղքատ բնակչությունը ստիպված է սպառողական զամբյուղի մեջ մտնող ապրանքի/ծառայության մի մասը գնելուց ընդհանրապես հրաժարվել:**

Ձեր կարծիքով որո՞նք են այն ապրանքները և ծառայությունները, որոնք աղքատ բնակչությունն ամբողջությամբ չի գնում/չի կարող գնել: Դրանցից որո՞նք նց ձեռքբերմանն է օգնում պետությունը:



**ՎԱՐՇՈՒԹՅՈՒՆ 4.** Քո ընտանիքի անդամներին կամ ծանոթներին հարցրո՛ւ՝ ինչպիսի՞ն էր կյանքը Խորհրդային Միությունում: Վերլուծի՛ր պատմածները և գրի՛ր քո կարծիքները շուկայական և պլանային տնտեսության դրական, բացասական կողմերի մասին.

Վարչական-պլանային տնտեսություն

Դրական կողմերը	Բացասական կողմերը

Շուկայական տնտեսություն

Դրական կողմերը	Բացասական կողմերը

## ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 5. Կազմի՝ ը քո մթերային զամբյուղը:

1 շաբաթվա ընթացքում հաշվառի՝ ը ամբողջ սնունդը և խմիչքը, ինչ կօգտագործես և դրանց քանակը: Գումարի ը շաբաթվա ընթացքում օգտագործած յուրաքանչյուր մթերքի քանակը և արդյունքները լրացրո՝ ւ արդյուսակում:

Իմ մթերային զամբյուղը

Մթերք	1 շաբաթվա ընթացքում օգտագործած մթերքի քանակը (գրամ կամ միլիլիտր)	Օրական միջին օգտագործումը (նախորդ սյունակում նշված թիվը բաժանեք 7-ի)	Օրական օգտագործման արժեքը (լարի)


### Ընդհանուր գումարը (լարի)

Որոշի՛ր յուրաքանչյուր ապրանքի միջին արժեքը և հաշվի՛ր օրական միջին օգտագործման արժեքը (մթերքի օրական օգտագործածը հաշվելու համար օգտագործի՛ր հետևյալ համեմատությունը՝ եթե A գրամ մթերքը արժե B լարի, այդ դեպքում D գրամ մթերքը կարժենա  $\frac{(D \times B)}{A}$  լարի: Եթե 200 գրամ կարագը արժի 4 լարի, 50 գրամը կարժենա ( $\frac{50 \times 4}{200} = 1$  լարի):

Աղյուսակում գումարի՛ր գրառած բոլոր մթերքների արժեքները և կստանաս քո մթերային զամբյուղի օրական արժեքը: Բազմապատկի՛ր ստացած թիվը 30-ով և արդյունքը գրի՛ր այստեղ: ----- լարի, սա քո մթերային զամբյուղի ամսական արժեքն է: Համեմատի՛ր այս թիվը միջին սպառողի կենցաղային մինիմումի հետ (տե՛ս դասագրքի 65-րդ էջի աղյուսակը): Ավել լ է, թե՛ պակաս: Ինչքանո՞վ:

Դատի՛ր, ի՞նչ եզրակացության կարող ես հանգել այս հաշվարկից:

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 6.** Համեմատի՛ր քո սպառողական գամբյուղը դասագրքի 66-րդ էջում նշված նվազագույն մթերային գամբյուղի հետ: Գրառի՛ր ո՞ր մթերքը կօգտագործես ավելի շատ, քան նվազագույն գամբյուղում է, ո՞րը՝ ավելի քիչ: Քո կարծիքով՝ ի՞նչն է դրա պատճառը: Արդյոք փոխելո՞ւ ենթակա է քո սննդի ռացիոնը:

Կօգտագործեմ ավելին, քան տված է նվազագույն գամբյուղում	Կօգտագործեմ ավելի քիչ, քան տված է նվազագույն գամբյուղում

## ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ISBN 978-9941-25-269-3



9 789941 252693